ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 10.12.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրում 24.05.2024թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 12-ի N 521-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5, 8.13 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 9
10.12.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրի

ք. Երևան 24 .05. 2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արալպլաստ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Ալավերդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2024թ. N 521-Ն որոշումը և **ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 10.12.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 5.1 կետում <<1 275 855 670 (մեկ միլիարդ երկու հարյուր յոթանասունհինգ միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր յոթանասուն)>> և <<212 642 612 (երկու հարյուր տասներկու միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր տասներկու)>> թվերը և բառերը փոխարինել համապատասխանաբար <<1 388 857 231 (մեկ միլիարդ երեք հարյուր ութսունութ միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր երեսունմեկ)>> և <<231 476 205.2 (երկու հարյուր երեսունմեկ միլիոն չորս հարյուր յոթանասունվեց հազար երկու հարյուր հինգ ամբողջ երկու)>> թվերով և բառերով:

1.1.2 Պայմանագրի N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի N1 հավելվածի:

1.1.3 Հաստատել Պայմանագրի 2024 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի N2 հավելվածի:

1.1.4 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել՝ սահմանելով մինչև 2024 թվականի հունիսի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի N 2 հավելվածը կազմված են մեկական էջից, Համաձայնագրի N 1 հավելվածը կազմված է 84 (ութսունչորս) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Արալպլաստ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Արշակունյաց 27/3
կառավարական տուն 3	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2474500282840010
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02240129
Հ/Հ 900011027605	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
Կ. Անտոնյան	Ա. Ալավերդյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ